

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**29 նոյեմբերի 2018թ.
ք.Երևան**

N 151-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ԻՆՔՆԱՔԱՑԱՐԿ
ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՌԱԶՄԻԿ ԷՎՈՅԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Ռազմիկ Հայկազի Էվոյանը 2018 թվականի նոյեմբերի 29-ին ներկայացրել է ինքնաքաղաքական մասին դիմում՝ առանց նոտարական վավերացման:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (Ընտրական օրենսգիրք) 90-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պատգամավորի թեկնածուները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո՝ դիմում ներկայացնելու դեպքում իրավունք ունեն հանելու իրենց թեկնածությունը: Ինքնաքաղաքական մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաքաղաքական մասին իր դիմումը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում:

Պատգամավորի թեկնածուի կողմից ինքնաքաղաքական մասին դիմում ներկայացվելու դեպքում թեկնածուն հանվում է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) և համապետական, և տարածքային ընտրական ցուցակներից:»:

Ռազմիկ Հայկազի Էվոյանը ներկայացել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 29.11.2018թ. նիստին և հաստատել ինքնաքաղաքական մասին իր դիմումը:

Ընտրական օրենսգրքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուի գրանցումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվում, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաքաղաքական մասին:»:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 88-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի ընտրությունների «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցության ընտրական ցուցակում (102-րդ հերթական համար) և թիվ 10 ընտրական տարածքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Ռազմիկ Հայկազի Էվոյանի գրանցումը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մուկուչյան